

Ք) փարսերու ուրիշ հետեանցով մը՝ Տրապիզոնի ճենովական գաղթականութիւնը ուղղակի կերպով միացած էր շենովայի կեդրոնական հեղինակութեան հետ. հոն կը գտնուէր մատակարարութիւն մը՝ Խրիստոս Պաշտօնաւնեմակ (Oficiu Gazariae) կոչուած, որուն պաշտօնն էր տնօրինել գաղթային գործառնութիւնները Պոսփորի և Պոնտոսի մէջ և դէպի այս երկու վայրերուն նաւային ծառայութիւնը։ Այս պաշտօնաստեանակը յատուկ հրահանգներ կը խմբագրէր՝ նաւերու հրամանատարներուն որ Տրապիզոն պիտի հանդիպէին և սակէ դէպի Դամբլէօ գացող կարաւաններուն համար. կու տար նաև մասնաւոր պատուէրներ Տրապիզոնի հիւպատոսներուն։ Այս վերջին տեղւոյն կարևորութեան հետեանքով, զայն բռնող անձին անուանակոչումը՝ կեդրոնական հեղինակութեան վերապահուած էր,

փոխանակ կաֆֆայի հիւպատոսին թողլու. առիկա՝ իբրև գլուխ Պոնտոսի գաղթականութիւնը ներքին ամենէն կարևորին, իրաւունք ունէր առնուանել՝ ստորին կարգի գաղթային պաշտօնեաներ, նոյն իսկ իր քնակավայրէն դուրս։ Թէ՛ օգնելու համար հիւպատոսներուն՝ անոնց մատակարարական և դատական պաշտօններուն մէջ, և թէ՛ ձևացնելու համար՝ ռամկավարական սկզբունքներու համեմատ՝ հակակշիռ մը անոնց գօրութեան. իրենց միացած էին երկու խորհուրդներ, փոքր և մեծ խորհուրդ մը, բաղկացած՝ մին վեց և միւսը քսանէնչորս անդամներէ, ամենքն ալ նոյն գաղթականութեան մէջէն ընտրուած։

Յաջորդով պիտի խօսինք Վիենտիկեցոյ գաղթականութիւններուն վրայ։

Թրգմ. Մ. Հ. Մ. Շէքերեան

Մ Ե Ր Ն Ո Ր Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Ա Ն Ք

ՊԵՏԻ ԲԱՅ Է, 1500 տարի կ'ընէ, Աւարարի գաշտին տեսարանը։ Դա գերագոյն ողբերգութիւնն է՝ որու հանդիսատեսն է համօրէն աշխարհը։ Մամիկոնեան դիւցազնին և Ղևոնդ Վանանդացիին մեծ դէմքերը կը լուսաւորեն այդ հակադարձութիւնը։ Գլխաւոր դերակատարները, անոնք որ կրօնքի ու հայրենիքի գաղափարը կը մարմնացնեն, անփոփոխ մնացած են, անընկճելի, վճռական, պատկառանք ու հիացում ազդող, Դահլիճները կատարելագործուած են, «անդնդային վիշապը» վազը փոխուելու աստիճանի չափ վայրենացած։ Ամենէն սև դէմքերը հանդիսանալուներուն է, կարելի է ըսել՝ թէ անոնք անարժան են տեսարանին վեհութեանը։ Անոնք որ կեղծեցին իրականութեանց պատրանքին առջև յուզուիլ, փառք համարեցան խուլ և համր ձևանալ իրական, ոգին ցնցող ոճիւրներուն առջև, անզգայութիւնը տանելով մինչև անգթութեան սահմանները։

Միջին դարերէն մինչև այսօր մշտական կռիւներու մէջ տարուբերուող մեր

ազգը մեծ թուով տուաւ իր մարտիրոսները, առանց յեղափոխութեան մատնելու իր պատմական ճակատագիրը։ Ան կանգնած իր անպաշտպան հողին վրայ, միայնակ մղեց արիւնահեղ պայքարներ պաշտպանելով ըրիտօնէական քաղաքակրթութեան սկզբունքները խաւարի վրայ նստող հուժկու և խստասիրտ հրոսակներուն դէմ։ Դժբախտութեան սև դարեր չկրցան զրկել հայ ցեղն իր դիմադրական ուժէն, զոր կը գտնէր ան իր մտքին ու հոգւոյն մէջէն, երբ ամէն անգամ վտանգուած կը տեսնէր կրօնքի ու հայրենիքի դատը։ Աւարարի տեսարանը և այդ սև դարերը կը նսեմանան կարծես Միջագետքի անապատներուն քով։ Խորագովի ապառաժ անապատը, ուր գացին իրենց փառաւոր կեանքը կնքելու Ս. Ղևոնդեանը, բուրաստանի մը կը վերածուի մեծ անապատին առջև, ուր ոչ թէ կ'իյնան «հազար երեսուն և վեց վկաներ», աւրը ձեռքերնուն մէջ, ոչ թէ խումբ մը քահանաներ, արգարութեան ատենանի մ'առջև քաշուած, այլ զէնքը ձեռքերնէն խլուած բիրաւոր Հայեր,

խաչը ձեռքերնուն մէջ փշուռած եպիսկոպոսներու և քահանաներու խումբեր, լոյսին առջև հազիւ աչքերնին բացած հազարաւոր մանուկներ ու անհամար հայ հարսեր ու կուսանքներ, առանց իրենց ետև ունենալու գտնայնդուած Յազկերտի Հայաստան մը, ուր կարենային բարախել իրենց սրտերը սիրելիներու համակրութեան մէջ։

Անոնք միայնակ երևեցան համաշխարհի պատմութեան տեսարանին վրայ, լուսաւորուած ազատ ու անկախ Հայաստանի մը գաղափարին առջև, ունենալով իրենց գլխուն վերև շողողացող փառասակր։ Հոս ալ դարձեալ նոյն սըրբակրօն, արի ուխտաւորներն են, Ս. Ղևոնդեանց արժանաւոր յաջորդները, որ իրենց ժողովուրդներով ի միասին, աստուածային նախանձով լեցուած, իրենց արեամբ հաստատել ուզեցին իրենց քաղաքած վարդապետութեան ճշմարտութիւնը Մուհամմէտի աղանդին առջև։ Քրիստոսի այս խոստովանողներուն դիմացն է որ Մոնգոլ-թիւրքերն իրենց զարհուրելի հանճարը նոր տանջանքներ գտնելու գործածեցին։ Հեռաւոր պատկեր մը կազմեւ լու համար՝ փառքերով ու սարսափներով լեցուն այդ ողբերգութեան, մարդս պէտք է փոխադրուի Դիոկղետիանոսի դարուն մէջ, այն ատեն կրնայ համոզուիլ թէ ամէն մէկ թիւրք՝ հոռմայեցի հալածիչ կայսրէն վեր է, և որոնց երջանկագոյն օրն այն եղաւ՝ երբ սուլթանական հրովարտակը արիւնաթաթախ սուրբերու ծայրն անցուցած դիւային խնճոյքներ սարքեցին մեր

մարտիրոսներուն անթաղ դիակներուն շուրջը։ Եթէ արդի մարդկութիւնն անարժան ըլլար իր դարուն, պարծանք պիտի համարէր իրեն զայն իր բուն անունով կոչելու « Հայ մարտիրոսաց դարը »։

Այսօր մենք ձեռքի տակ ունինք միայն պաշտօնական ցանկը բոլոր այն հայկաթողիկէ եպիսկոպոսներուն և քահանաներուն, որոնք արիարար ընկան պատուոյ դաշտին վրայ, դաւանելով և մեռնելով, ինչպէս իրենց փառապանծ նախնիքը բրիտոնէական կրօնքի սկզբունքներուն վրայ։ Փոքրիկ Հասարակութեան տուած նահատակներուն թիւը պարզապէս սարսափելի է, որչափ դառն պիտի ըլլայ մեր կսկիծը, երբ վաղը միւս օրը տխուր իրականութիւնը դնէ մեր առջև բովանդակ Հայ ազգի նահատակներուն ամբողջական ցուցակը¹։

Իրաւունքներ ունինք սակայն՝ որ մեր սիրելիներուն անմեղ արիւնով նոխրուազործուեցան։ Քաղաքական Հայաստանէ մը զատ, զոր կը պահանջենք ազատ ու երջանիկ տեսնելու իբր գին այնչափ պատուական կեանքերու, կայ մեզի համար նաև լայնածաւալ Հայաստան մ'ալ, ուր տարածուած են պաշտելի նշխարները մեր անհամար մարտիրոսներուն, և որ կը տարածուի Միջագետիի անապատներէն մինչև Սև ծովի ափերը։ Այդ արժանի է ոչ միայն մեր՝ այլ համօրէն մարդկութեան յարգանքին։ Այն անմահ է, ինչպէս գաղափարը, որու համար ինկան անոնք։

Հ. Ս. ՏԵՐ-ՄԱՎԵՍԵԱՆ

1. Պաշտօնական ցուցակը 1918ի Քաղաքացիական պահելով, առ այժմ մեր ընթերցողներու ի գիտութիւն կը յայտնենք թէ սպանուած կամ տարազրկութեան նեղութիւններէն մեռած հայ կաթողիկէ եպիսկոպոսաց ցարդ ծանօթ թիւն է 8, քառանգայից՝ 106, վեհապետ Միսի-

թորեան միաբանից՝ 4, Անտոնեան Միաբանութեան՝ 1, Կ. Պոլսոյ Անարատ Յղութեան Կուսաններէն՝ 15, Պատիոյ Եռյամեռն միաբանութեան 8, Տրապիզոնի վեհապետեան ընկերութեան 30,